ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (14.09.2020թ.-17.12.2020թ.)

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի հինգերորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2020 թվականի սեպտեմբերի 14-ին և ավարտվել դեկտեմբերի 17-ին: Գումարվել է 5 հերթական, 9 արտահերթ և 1 հատուկ նիստ:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովն ընդունել է 93 օրենք, որից՝

- 3-ը «մայր» օրենքներ են: Դրանք են՝ «Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2019 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին»:

- 72՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 18՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 60-ի հեղինակը Կառավարությունն է, 1-ինը՝ «Իմ քայլը» խմբակցությունը, 28-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները, իսկ 4-ինը՝ Կառավարությունը և Ազգային ժողովի պատգամավորները («Հայաստանի Հանրապետության

հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների փաթեթը /Կ-728-11.09.2020-ՏՀ/):

Ընդունված օրենքներից 8-ինը գլխադասային է համարվել Առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 8-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 18-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 11-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 20-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը, 20-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը՝

-

- ընտրել է Սահմանադրական դատարանի երեք դատավոր (Երվան Խունդկարյան, Արթուր Վաղարշյան և Էդգար Շաթիրյան),
- ընտրել է Կենտրոնական բանկի խորհրդի մեկ անդամ (Դավիթ Նահապետյան),
- ընտրել է Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Արկադի Խաչատրյան),
- ընտրել է Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Վահե Ղուլարյան),
- ընդունել է «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիան դատապարտելու վերաբերյալ» հայտարարությունը:
- ընդունել է «Հայ ռազմագերիներին եւ գերեվարված քաղաքա ցիական անձանց գերությունից վերադարձնելու խնդիրը» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ուղերձը:
- քննարկվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված հարցապնդումը, որի արդյունքում խմբակցությունը առաջարկել է ընդունել «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծ, որն էլ 36 կողմ, 84 դեմ, 0 ձեռնպահ ձայներով չի ընդունվել:

ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 51 բանավոր հարցով: Հնչել է 74 պատգամավորական հայտարարություն: